ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<<21 >> <<նոյեմբեր >> 2014 թ N 120
ք. Եղեգնաձոր

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ԵՐՎԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետի, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի պահանջներով, և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզի <<Հերհերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2014 թվականի նոյեմբերի 17-ի գրությունը և Երվանդ Ոսկանյանի հետ կնքած 2014 թվականի սեպտեմբերի 8-ի N266 ժամկետային աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2014 թվականի նոյեմբերի 21-ից Երվանդ Ոսկանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Հերհերի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 / հինգ/ տարի ժամկետով:
2. 2014 թվականի նոյեմբերի 21-ից լուծել Երվանդ Ոսկանյանի հետ կնքած 2014 թվականի սեպտեմբերի 8-ի N266 աշխատանքային պայմանագիրը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ